ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի ՆԻՍՏԻՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 13-րդ մասի և ՀՀ վարչապետի 2006 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման գործընթացի 2-րդ փուլի աշխատանքների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» N 419-Ա որոշման պահանջներին համապատասխան ՀՀ կենտրոնական բանկը (այսուհետ՝ Բանկ) ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն է ներկայացրել Բանկի խորհրդի 2006 թվականի հուլիսի 31-ի N 460-Ա որոշմամբ հաստատված Բանկի 2007 թվականի վարչական ծախսերի նախահաշիվը և կապիտալ ներդրումների ծրագիրը՝ ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի նախագծում ներառելու համար:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ժբ$^2$» կետի պահանջի համաձայն սույն եզրակացությունը տրվում է Բանկի կողմից ներկայացված, վերը նշված փաստաթղթերի վերաբերյալ:

Սույն եզրակացությանը կցված են Բանկի վարչական և կապիտալ ներդրումների գծով ծախսերի 2004 թվականի փաստացի, 2005 թվականի ծրագրային և 2006 թվականի հայտավորված ցուցանիշների համեմատական աղյուսակները:

### Ա. Վարչական ծախսերի նախահաշվի նախագծով նախատեսված ծախսերի վերաբերյալ

1. Բանկի կողմից ներկայացված բացատրագրում (այսուհետ՝ բացատրագիր) տրված չեն Բանկի վարչական ծախսերի 2006 թվականի նախահաշվի նախագծով նախատեսվող ծախսերի (ծախսատեսակների) համեմատական գնահատականները 2005 թվականին փաստացի կատարված, 2006 թվականի համար հաստատված և նախատեսվող համապատասխան ցուցանիշների նկատմամբ: Բացի այդ,

առանձին ծախսատեսակների գծով նախատեսվող գումարները բացատրագրում ներկայացված են առանց հիմնավորող հաշվարկների:

2. Ըստ ներկայացված նախահաշվի, 2007 թվականին Բանկի վարչական ծախսերը կկազմեն 3,557.9 մլն դրամ, որը գերազանցում է 2006 թվականի համար օրենքով հաստատված համապատասխան ցուցանիշը 6.6%-ով կամ 220.5 մլն դրամով, իսկ 2005 թվականի փաստացի ցուցանիշը՝ 57.5%-ով կամ 1,298.3 մլն դրամով: 2006 թվականի համար հաստատված վարչական ծախսերի ցուցանիշի նկատմամբ 2007 թվականի համար ծրագրավորվող համապատասխան ցուցանիշի գերազանցման հիմնական մասը բաժին է ընկնում Բանկի ապարատի պահպանման ծախսերին:

3. Ըստ ներկայացված նախահաշվի, 2007 թվականին Բանկի ապարատի պահպանման ծախսերը կկազմեն 3,373.2 մլն դրամ, որը գերազանցում է 2006 թվականի համար հաստատված համապատասխան ցուցանիշը 6.5%-ով կամ 204.5 մլն դրամով, իսկ 2005 թվականի փաստացի ցուցանիշը՝ 58.2%-ով կամ 1,241.4 մլն դրամով: Բանկի ապարատի պահպանման ծախսերի 87.8%-ը կամ 2,962.2 մլն դրամը բաժին է ընկնում Բանկի աշխատակիցների աշխատավարձի (ներառյալ պարգևատրումը և նյութական խրախուսումը) և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով ծախսերին:

3.1. Ըստ բացատրագրի, 2007 թվականին Բանկի ապարատի աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով հանրապետության բանկային համակարգի համար կանխատեսվող 355 հազար դրամ[1] միջին ամսական աշխատավարձի չափը:

Բանկի աշխատակիցների աշխատավարձի (ներառյալ աշխատավարձին հավասարեցված միջոցների) գծով 2006 թվականի հաստատված ծախսերը կազմել են 2,417.6 մլն դրամ, որի դիմաց, ըստ բացատրագրի, 2007 թվականին նախատեսվող աշխատավարձի (ներառյալ աշխատավարձին հավասարեցված միջոցների) գծով ծախսերը հաշվարկվել են 2,615.2 մլն դրամ կամ 8.7% աճով: Բանկի կողմից ներկայացված բացատրագրում չի ներկայացված թե Բանկի աշխատակիցների հաշվարկային որ թվաքանակի և մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձի որ գումարի ենթադրությամբ են կատարվել Բանկի աշխատակիցների 2007 թվականի աշխատավարձի (ներառյալ աշխատավարձին հավասարեցված միջոցների) գծով ծախսերի գումարի հաշվարկները: Չեն ներկայացված նաև Բանկի աշխատակիցների թվաքանակի և մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձի գծով 2005 թվականի փաստացի և 2006 թվականի սպասողական ցուցանիշները:

3.2. Ըստ բացատրագրի 2007 թվականին նախատեսվում են 304.7 մլն դրամ գործուղման ծախսեր (ներառյալ անձնակազմի ուսուցման և վերապատրաստման ծախսերը), որոնց բացվածքն ըստ ծախսային բաղադրիչների ներկայացված չէ, իսկ համապատասխան նկարագրությունը տրված է առանց քանակական բնութագրիչների: 2007 թվականի գործուղման ծախսերի գումարը կանխատեսվել են 2006 թվականի համանման ծախսերի ցուցանիշի 98.8%-ի չափով: Սակայն բացատրագրից պարզ չէ, թե որ-

[1] Ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի բյուջետային ուղերձում ներկայացված ՀՀ կենտրոնական բանկի տվյալների 2005 թվականին բանկային համակարգում միջին աշխատավարձը կանխատեսվում էր 302 հազար դրամի չափով:

քան աշխատակից է մասնակցելու 2007 թվականին իրականացվելիք ուսուցման և վերապատրաստման ծրագրերին, որքան են Բանկի միջոցների հաշվին կատարվելիք ծախսերի կառուցվածքն ու ծավալն ըստ յուրաքանչյուր ուսուցման և վերապատրաստման ծրագրի:

2007 թվականի ներկայացուցչական ծախսերը Բանկի 2006 թվականի ծախսերի նախահաշվի բացատրագրում այս ծախսատեսակի գծով նշված մակարդակը գերազանցում են 6.6%-ով կամ 2.7 մլն դրամով:

3.4. Ծառայողական փոխադրամիջոցների շահագործման և սպասարկման 2007 թվականի ծախսերը առաջարկվել են՝ 62.8 մլն դրամ կամ որը կազմում է 2006 թվականի համար հաստատված մակարդակի 114.2%-ը: Ծախսերի նման աճը, ըստ Բանկի, բացատրվում է ծառայողական փոխադրամիջոցների շահագործման համար օգտագործվող վառելիքի գների աճով, սակայն բացատրագրից պարզ չէ այս ծախսատեսակի գծով 2007 թվականի համար կանխատեսված գումարի հաշվարկման հիմքում դրված այնպիսի ցուցանիշների կանխատեսումը, ինչպիսիք են բենզինով և դիզվառելիքով աշխատող մեքենաների քանակը, համապատասխան վառելիքի տեսակով աշխատող մեկ մեքենայի միջին տարեկան վազքը և դրանով պայմանավորված վառելիքի ծախսը:

4. Ըստ բացատրագրի, լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսերը 2007 թվականին կկազմեն 42.2 մլն դրամ, որը 10.0%-ով կամ 16.3 մլն դրամով գերազանցում է 2006 թվականի համար օրենքով հաստատված համապատասխան ցուցանիշը: 2006 թվականի ծրագրայինի նկատմամբ աճը, ըստ բացատրագրի, պայմանավորված է ինչպես թերթերի, ամսագրերի գների, գրքերի քանակության, այնպես էլ հեռուստատեսային հեռարձակման ռոպեավճարի ակնկալվող աճով:

5. 2007 թվականի ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսերն կկազմեն՝ 59.0 մլն դրամ, որը 2006 թվականի համապատասխան փաստացի ցուցանիշը գերազանցում է 8.0 մլն դրամով կամ 15.7%-ով: Ծախսերի աճն, ըստ Բանկի, բացատրվում է նոր հեռախոսահամարների միացման անհրաժեշտությամբ և սակագների բարձրացման միտումով, ռոպեավարձերի կիրառմամբ: Բացատրագրում ներկայացված չեն վերը նշված ծախսերի հաշվարկման հիմքում դրված հաշվարկային ցուցանիշները (ընթացիկ տարում շահագործվող հեռախոսակետերի և բջջային հեռախոսների քանակը, 2007 թվականին նոր միացվող հեռախոսահամարների քանակը և դրանց անհրաժեշտության հիմնավորումը, սակագների բարձրացման կիրառված միտումները):

6. Տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված 2007 թվականի ծախսերը՝ 68.5 մլն դրամը, գերազանցում են 2006 թվականի համար օրենքով հաստատված համապատասխան ցուցանիշը 6.5%-ով կամ 4.2 մլն դրամով: Ծախսերի աճը, ըստ Բանկի, պայմանավորված է ձեռքբերվող ապրանքատեսակների միավորի արժեքի թանկացման հետ, ինչպես նաև կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ձևավորված ստորաբաժանումների պահանջով:

7. Չնախատեսված ծախսերը, ինչպես և 2006 թվականի նախահաշվում, 2007 թվականի համար ծրագրվել են 15.0 մլն դրամի չափով:

## Բ. Կապիտալ ներդրումների ծրագրի նախագծով նախատեսված ծախսերի վերաբերյալ

Բանկի կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակը 2007 թվականի համար Բանկի կողմից առաջարկվում է 3,096.3 մլն դրամ, որը 2006 թվականի համար օրենքով հաստատված համապատասխան ցուցանիշից ավելի է 741.7 մլն դրամով կամ 31.5%-ով: Մասնավորապես, 2006 թվականին Բանկը նախատեսում է կապիտալ ներդրումների 2007 թվականի համար առաջարկվող սահմանաքանակի.

ա) 64.6 %-ը կամ 2,000.0 մլն դրամը առանձնացնել Բանկի աշխատանքային շենքերի և շինությունների կառուցման, ձեռքբերման և կապիտալ վերանորոգման, ինչխես նաև իրավաբանական անձանց կապիտալում ներդրումների կատարման համար: Նշված գումարը 300 մլն դրամով կամ 17.6%-ով գերազանցում է 2006 թվականի համապատասխան ցուցանիշը: Մասնավորապես նախատեսվում է.

- շարունակել 2004 թվականին սկսված Բանկի III մասնաշենքի շինարարությունը (ինժեներական ցանցեր, հարդարման աշխատանքներ և սարքավորումների ձեռքբերում), որի ծավալը 2007 թվականին ծրագրվում է 1,500.0 մլն դրամի չափով (2006 թվականի համար սահմանված մակարդակին հավասար),
- 300.0 մլն դրամն ուղղել «Ինկասացիա» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում ներդրում կատարելու համար (ինկասացիոն կազմակերպությունների նկատմամբ «Ինկասացիայի մասին» ՀՀ օրենքով դրված պահաջի կատարմանն աջակցելու համար «Ինկասացիա» ՓԲԸ-ին զրահապատ մեքենաներով ապահովելու նպատակով),
- 200.0 մլն դրամն ուղղել Շուշիյում ՏԴԿ-ի կապիտալ վերանորոգման համար.

բ) 35.4 %-ը կամ 1096.3 մլն դրամ առանձնացնել համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի, կապի միջոցների և Բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ հիմնական միջոցների ձեռքբերման և վերանորոգման, ինչպես նաև վարչական նպատակներով իրականացվող կապիտալ ներդրումների համար:

Այսպիսով, հաշվի առնելով վերը նշվածը, գտնում ենք, որ նպատակահարմար է առաջարկել Բանկին.

ա) մեկ անգամ ևս քննարկել վերջինիս 2007 թվականի ծախսերi բացատրագիրը՝ այն առավել հիմնավոր ներկայացնելու տեսանկյունից,

բ) նկատի ունենալով Բանկի 2005 թվականի գործունեության տարեկան արդյունքներով ստացված փաստացի, ինչպես նաև 2006 թվականի արդյունքներով ակնկալվող վնասը և Բանկի պահուստների նվազման միտումը, վերանայելու Բանկի 2007 թվականի առաջարկվող ծախսերը (այդ թվում՝ նաև կապիտալ ներդրումների գծով), դրանց ծավալը հնարավորինս կրճատելու նկատառումով: